Հավելված 2

Տեղեկատվություն

ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև

համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի միջեւ կնքված համաձայնագրի շրջանակում գործող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի կողմից ամբուլատորիայի կառուցում Բյուրականում:	2016թ. մարտի 29	ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի միջեւ կնքված համաձայնագրի շրջանակում գործող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի կողմից Բյուրականում կառուցվել է ամբուլատորիա, որի բացումը կայացել է մարտի 29-ին:
2.	Մասնակցություն Գերմանիայի միջազգային համագործակցության Ընկերության կազմակերպած "Գիտելիքի Կառավարում" միջոցառմանը	2016թ. ապրիլի 1	Մարզի պատվիրակությունը մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության Ընկերության կազմակերպած "Գիտելիքի Կառավարում" միջոցառմանը, որը որը կազմակերպվել է ,, Հանայնքային զարգացում Հարավային Կովկասում,, ծրագրի շրջանակում՝ Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգ (ՀԿՏՀ) օգտագործող Արագածոտն մարզի 26 համայնքի համար:
3	Մասնակցություն ԵԱՀԿ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության եւ ՀՀ արդարադատության կողմից կազմակերպած ,,Տեղեկատվության ազատությունը որպես պետական	2016թ. ապրիլի 5-6	Մարզպետարանի ներկայացուցիչը մասնակցել է ԵԱՀԿ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության եւ ՀՀ արդարադատության կողմից կազմակերպած ,,Տեղեկատվության ազատությունը որպես պետական մարմինների թափանցիկությունը խթանելու գործիք,,վերապատրաստման դասընթացին:

	մարմինների թափանցիկությունը խթանելու գործիք,,վերապատրաստման դասընթացին		
4	Հայ-ֆրանսիական մանկական նվագախմբի համերգ	2016թ. ապրիլի 18	Աշտարակի մշակույթի տանը կազմակերպվել է Հայ-ֆրանսիական մանկական նվագախմբի համերգ: Նախագծի շրջանակում ֆրանսիայից ժամանած մասնագետների կողմից կազմակերպվել են վարպետաց դասեր, ճանաչողական այցելություններ:
5	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում Արագածավան համայնքում Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոն (ԳԱՍԿ) հիմնում:	2016թ. ապրիլի 25	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը, Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում հիմնել է Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոն (ԳԱՍԿ): Մասնագիտացված կենտրոնը ուղղված է Հայաստանում անասնապահության ոլորտի զարգացմանը և նպաստելու է առաջադեմ տեխնոլոգիաների և ֆերմերային գործարարության զարգացման փորձի առաջխաղացմանը:
6	ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» կողմից բնակարանաշինության ծրագիր Արագածոտնի մարզի Ավան համայնքում	2016թ. մայիսի 25	ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» կողմից իրականացվող բնակարանաշինության ծրագրի շրջանակում կողմերի ղեկավարներն ու աշխատակիցները Ավան համայնքում մասնակցել են Սարգսյանների ընտանիքի կիսակառույց տան շինարարությանը: Կամավորներն ընտանիքին օգնել են ծածկի բետոնացման աշխատանքները կատարելու հարցում:
7.	ՀՀ Արագածոտնի մարզպետի՝ ԻԻՀ Խորասանի նահանգապետին ուղղված հրավերը 2016 թվականի 3-4 եռամսյակում այցելելու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի	2016թ. մայիսի 30	Հաշվի առնելով հայ-իրանական կողմերի փոխադարձ հետաքրքրվածությունը՝ զարգացնելու երկկողմ միջտարածաշրջանային հարաբերությունները, ՀՀ Արագածոտնի մարզպետը ԻԻՀ Խորասանի նահանգապետին հրավիրել է 2016 թվականի 3-4 եռամսյակում այցելել

	մարզ այցելելու վերաբերյալ		Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ: